«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ 29.10.2007թ.
ՌԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝
Վ.Բ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

Սույն կանոնակարգը կազմված է ՀՀ կառավարության 2005 թ. նոյեմբերի 9-ի N 1933-Ն կրթության մասնագիտությունների ցանկի հաստատման մասին որոշման համապատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված /2003 թ./ բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների /մագիստրոսական աստիճան/ համաձայն.

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտությունից մագիստրոսների պատրաստումն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

ա/ ֆիզիկական դաստիարակության տեսություն և տեխնոլոգիաներ.

բ/ Սպորտ և մարզիկների պատրաստության համակարգ.

գ/ կինեզիոլոգիա և ադապտացված ֆիզիկական կուլտուրա

դ/ մարզական լրագրություն

2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կարգավիճակ ունեցող անձիք: Այլ բուհերի շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրա կատարվում է համապատասխան ֆակուլտետի խորհրդի կարծիքի և հարցազրույցի հիման վրա:

2.2. Մագիստրատուրայում ուսուցումը կազմակերպվում է անվճար և վճարովի հիմունքներով: Ըստ ուղղությունների անվճար և վճարովի տեղերի բաշխումը կատարում է ընդունող հանձնաժողովը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հատկացված տեղերի շրջանակներում՝ տվյալ մասնագիտության բակալավրիատի շրջանավարտների թվին համապատասխան:

Բանակի տարկետման իրավունքով տեղերի բաշխումը ըստ մասնագիտությունների կատարում է ընդունող հանձնաժողովը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հատկացված բանակի տարկետման իրավունքով տեղերի շրջանակներում՝ տվյալ մասնագիտության բակալավրիատի արական սեռի շրջանավարտների թվին համապատասխան: Մրցույթի արդյունքներով մագիստրատուրա ընդունվածները բաշխվում են անվճար և վճարովի ուսուցմամբ՝ Մագիստրոսական տեղերի հատկացման ժամանակ հաշվի են առնվում ամբիոնների պահանջմունքները՝ կոնկրետ մասնագետներ պատրաստելու համար:

2.3. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ռեկտորի նախագահությամբ կազմավորվում է ընդունող հանձնաժողով՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, դեկանների, մագիստրատուրայի բաժնի վարիչի անդամակցությամբ: Քննությունների անցկացման համար հանձնաժողովի կազմում ներգրավվում են նաև համապատասխան ամբիոնների վարիչները:

2.4. Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է երկու փուլով.

2.4.1. Առաջին փուլով անվճար և վճարովի համակարգ /բանակի տարկետման իրավունքով և առանց բանակի տարկետման իրավունքի/ կարող են դիմել Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի տվյալ ֆակուլտետի ընթացիկ ուսումնական տարվա այն շրջանավարտները, որոնք ավարտական աշխատանքից և պետական քննություններից ստացել են ,,Լավ,, կամ ,,Գերազանց,, գնահա-տականներ, որոնց դիպլոմի միջուկում գրանցված բոլոր գնահատականների միջինը ,,4,, և ավելի միավոր է, և որոնց համապատասխան ֆակուլտետի խորհուրդը երաշխավորել է ուսումը շարունակելու մագիստրատուրայում: Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով:

2.4.2. Երկրորդ փուլով վճարովի համակարգ /առանց բանակի տարկետման իրավունքի/ կարող են դիմել սույն կանոնակարգի 2.4.1 կետի պահանջներին համապատասխանող Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ընթացիկ ուսումնական տարվա այն շրջանավարտները, որոնք դիմել և չեն անցել առաջին փուլի մրցույթով, ինչպես նաև 2.4.1 կետի պահանջներին բավարարող այլ մասնագիտությամբ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի և այլ բուհերի ընթացիկ ուսումնական տարվա շրջանավարտները: Նախորդ տարիների շրջանավարտները կարող են դիմել մագիստրատուրա 2.4.1 կետի պահանջները չբավարարելու դեպքում: Երկրորդ փուլի ընդունելությունը նախապես կատարվում է մրցութային հիմունքներով:

2.5. Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

ա/ դիմում ռեկտորի անունով, նշելով մագիստրոսական ուղղությունը.

բ/ բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճենները.

գ/ երաշխավորագիր ֆակուլտետի խորհրդից; Նախորդ տարիների շրջանավարտները երաշխավորագիր չեն ներկայացնում.

դ/ 4 լուսանկար /3x4 չափսի/.

ե/ ընդունելության ծառայությունների համար սահմանված 1000 դրամի վճարի անդորրագիր:

3. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԸ

3.1. Առաջին փուլի ընդունելությունը կատարվում է ներկայացրած փաստաթղթերի և դիպլոմի միջուկում գրանցված առարկաների միջին միավորի հիման վրա՝ ընդունող հանձնաժողովի երաշխավորմամբ: Հավասար միջին միավորների առկայության դեպքում հերթականությամբ հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները՝

ա/ գերազանցության դիպլոմի առկայությունը.

բ/ ավարտական աշխատանքի և պետական քննությունների գնահատականները.

գ/ մարզական կարգը և կոչումը, միջազգային մրցումների արդյունքները

դ/ տպագրված գիտական աշխատանքները.

ե/ գիտական կոնֆերանսներում զեկուցման թեզիսները:

3.2. Երկրորդ փուլով ընդունելությունը կատարվում է տվյալ մասնագիտության բակալավրի պետական քննական ծրագրին համապատասխան՝ քննության արդյունքներով առարկայական քննական հանձնաժողովի ներկայացրած արձանագրության հիման վրա ընդունող հանձնաժողովի կայացրած որոշմամբ: Քննության հավասար արդյունքների դեպքում հերթականությամբ հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները՝

ա/ գերազանցության դիպլոմի առկայությունը.

բ/ դիպլոմի միջուկում գրանցված առարկաների միջին միավորը.

գ/ ավարտական աշխատանքի և պետական քննությունների գնահատականները.

դ/ տպագրված գիտական աշխատանքները.

ե/ մարզական կարգը և կոչումը, միջազգային մրցումների արդյունքները

զ/ գիտական կոնֆերանսներում զեկուցած թեզիսները:

3.3. Առաջին փուլի գործերի ընդունումը կատարվում է մայիսի 21-ից մինչև հունիսի 4-ը, երկրորդ փուլի՝ հունիսի 18-ից մինչև հունիսի 29-ը, իսկ գարնանը բանակից զորացրվածների համար՝ օգոստոսի 27-ից մինչև օգոստոսի 30-ը:

Ընդունելությունը կատարվում է առաջին փուլի արդյունքներով՝ հունիսի 11-ից մինչև հունիսի 14-ը, երկրորդ փուլի՝ հուլիսի 6-ից մինչև հուլիսի 10-ը, իսկ գարնանը բանակից զորացրվածների համար՝ սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 6-ը:

3.4. Մագիստրատուրայի վճարովի համակարգում երաշխավորված ուսանողների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո:

3.5. Մագիստրատուրայի դասերն սկսվում են սեպտեմբերի 15-ից:

4. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4.1.Մագիստրոսական պատրաստության ծրագրի բովանդակությունը և ծավալը որոշվում է ուսումնական պլանով, որը կազմվում է մագիստրոսական մակարդակի պատրաստության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և հաստատվում է ինստիտուտի գիտական խորհրդի կողմից: Այն իր մեջ ներառում է բնագիտական, հումանիտար և մասնագիտական առարկաներ, որոնք չեն կրկնում այն առարկաների բովանդակությունը, որոնք ուսումնասիրվել են բակալավրի ուսումնառության շրջանում: Դրանց բովանդակությունը ուղղված է մասնագիտական կրթության ընդլայնմանն ու խորացմանը:

4.2. Մագիստրոսների կրթական գործունեությունն իր մեջ ներառում է ուսումնական պարապմունքների և ինքնուրույն աշխատանքի գործընթացում ուսումնական պլանի յուրացումը ըստ առարկաների, ընտրական դասընթացների, ուսումնական պրակտիկաների, գիտելիքների կարողությունների և հմտությունների, որոնք նախատեսված են պետական չափորոշիչներով, ներառյալ՝ դասավանդման գործունեության փորձի ձեռքբերումը:

4.3. Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը որոշվում է ուսումնական պլանով և մագիստրոսական ատենախոսության թեմայով, ձևակերպվում է մագիստրոսի գիտահետազոտական աշխատանքի անհատական պլանով, որը որոշում է այդ աշխատանքի հիմնական փուլերի բովանդակությունը և իրականացման ժամկետները:

4.4. Մագիստրոսների գիտահետազոտական գործունեությունը ներառում է գիտահետազոտական աշխատանքի անհատական պլանի մշակումը ուսուցման ամբողջ ընթացքում, ըստ թեմայի մագիստրոսական ատենախոսության հետազոտության մեթոդների ուսումնասիրումն ու յուրացումը, տեսական և գործնական հետազոտությունների անցկացումը, ստացված գիտական տվյալների մշակումը, հետազոտության արդյունքների ձևավորումը մագիստրոսական ատենախոսության տեսքով, գիտական հոդվածներով, զեկուցումներով և գիտական կոնֆերանսներում ելույթներով:

4.5. Մագիստրոսի գիտահետազոտական աշխատանքի անմիջական ղեկավարումը իրականացնում է գիտական ղեկավարը, որը պետք է ունենա գիտական աստիճան կամ գիտական կոչում և աշխատի տվյալ ինստիտուտում: Գիտական ղեկավարը օգնում է մագիստրոսին ատենախոսության թեմայի ընտրության գործում, մագիստրատուրայում սովորելու ողջ ընթացքում գիտահետազոտական աշխատանքի անհատական պլանը կազմելուն, ըստ ատենախոսության թեմայի հետազոտության մեթոդների ընտրությանը և յուրացմանը, գիտափորձերի կազմակերպման հարցերի լուծմանը, արդյունքների մշակմանն ու ձևակերպմանը, վերահսկում է նրա կողմից աշխատանքի անհատական պլանի կատարումը:

Գիտական ղեկավարը կարող է միաժամանակ իրականացնել հինգից ոչ ավելի մագիստրոսների ղեկավարություն:

Գիտական ղեկավարների թեկնածությունները հաստատվում են թողարկող ամբիոնների կողմից:

5. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5.1. Ինստիտուտում մագիստրոսական պատրաստությունը կազմակերպվում է մագիստրոսական պատրաստության բաժնի և համապատասխան ամբիոնի կողմից:

5.2. Ուսուցումը մագիստրատուրայում իրականացվում է առկա ձևով, մեկ տարի տևողությամբ:

5.3. Ուսումնական պարապմունքները մագիստրատուրայում անցկացվում են ըստ դասացուցակի՝ կազմված ուսումնական մասի կողմից՝ ուսումնական պլանին և գրաֆիկին համապատասխան:

5.4. Մագիստրատուրայում ուսուցումը հենվում է մագիստրոսների ակտիվ ինքնուրույն աշխատանքի վրա, որից ելնելով՝ առավելագույն լսարանական բեռնվածությունը չպետք է գերազանցի շաբաթական 16 ժամը:

5.5. Մագիստրոսների կողմից ուսումնական պլանով բոլոր առարկաների նախապատրաստման ծրագրերի յուրացման վերահսկողության համար նախատեսվում է ընթացիկ և ամփոփիչ ատեստավորում, ընդ որում վերջինս՝ ստուգարքների և քննությունների ձևով:

5.6.Գիտահետազոտական աշխատանքի և մագիստրոսական ատենախոսության պատրաստման վերահսկողությունն իրականացվում է 1-ին կիսամյակում մասնագիտական ամբիոնում ատեստավորման միջոցով և 2-րդ կիսամյակում նախնական պաշտպանությամբ, որի արդյունքներով նշանակվում է ստուգարք:

5.7. Ուսումնական պլանի գրաֆիկով նախատեսվում է ձմեռային և ամառային քննաշրջանների անցկացում, գիտահետազոտական և մանկավարժական պրակտիկա, պետական ամփոփիչ ատեստավորում:

5.8. Ինստիտուտի մագիստրատուրայի շրջանավարտներն իրավունք ունեն աշխատելու որպես՝

ա/ բարձրագույն ուսումնական հաստատություններում դասախոս.

բ/ ազգային հավաքական թիմերի մարզիչ և հոգեբան.

գ/ առապտիվ ֆիզկուլտուրայի մասնագետ և վերականգնող՝ բուժական-առողջարարական հիմնարկություններում և հատուկ դպրոցներում.

դ/ հանրապետության հավաքական թիմերի համալիր գիտական խմբերի ղեկավար, գիտական աշխատող:

6. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ

6.1. Մագիստրատուրայում ուսուցումը ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ, որին թույլատրվում են այն մագիստրոսները, ովքեր լիովին կատարել են ուսումնական պլանը, հանձնել են բոլոր ստուգարքներն ու քննությունները, անցել են բոլոր պրակտիկաները, ներկայացրել են մագիստրոսական ատենախոսությունը՝ վերջնական ձևավորված տեսքով:

6.2. Մագիստրոսների ամփոփիչ ատեստավորումը ներառում է մագիստրոսական ատենախոսության պաշտպանումը:

Ատենախոսության պաշտպանությունը կայանում է պետական ատեստավորման հանձնախմբի նիստում:

6.3. Այն անձանց, ովքեր լիովին կատարել են մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագիրը և հաջողությամբ անցել ավարտական ատեստավորումը, շնորհվում է ֆիզիկական դաստիարակության և սպորտի մագիստրոսի ակադեմիական աստիճան և տրվում է պետական դիպլոմ:

6.4. Ինստիտուտի Գիտական խորհրդի որոշմամբ մագիստրատուրայի ավարտական քննությունները կարող են համարվել ասպիրանտուրայի ընդունելության քննություններ: